ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1377-22 առ "20" 06 2022թ.

Ձեր №_____ առ "___" _____ 2022թ.

«ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի տնօրեն
պրն Հ.Ավետիսյանին
E-mail: info@elargold.ru

[Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/22-01/046 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Ավետիսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար զոդման, եռակցման նյութերի և սարքավորումների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ փետրվարի 16-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 11,15 և 16-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի միջև 2022թ. մարտի 30-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/22-01/046 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 709000 (յոթ հարյուր ինը հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 15-րդ չափաբաժնով սահմանված 150 կգ մետաղալարը, որի ընդհանուր գինը կազմում է 148000 (հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ և 16-րդ չափաբաժնով սահմանված 30 կգ մետաղալարը, որի ընդհանուր գինը կազմում է 286000 (երկու հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ, «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>:
- 2.4.2 կետի <<Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում>>,
- 2.4.4 կետի <<Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով>>:

- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

  Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1կետը այն է, գնորդը իրավունք ունի՝
- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը;
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

  բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի հետ 2022թ. մարտի 30-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/22-01/046 պայմանագիրը 15 և 16-րդ չափաբաժինների մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքների մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժը և տուգանքը:

Գլխավոր տնօրենի տեղակալ-
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս.Մաթևոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60